

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծառուկեանի և Արասխանեանի խանութում

Օտարաբաղադրելի գրվում են ուղղակի
Туф.мск. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄԶԱԿ“

Ծառուկեան է առանձին համարներով, հատը 7
կոպէկով, բացի խմբագրատանը, Ն. Ծառուկեանի
խանութներում: ՄԱՏՈՒԻՆԱՆԻ լամպերի մա-
ղաղխում (Շաբուրովի տանը), Ջ. Գրիգոր-
ԻՆԱՆՑԻ գրաւաճառանոցում (Կամուրջի մօտ)
ԳՐԻԳՈՐՈՎԻ մաղաղխում (Միքայելի տանը,
Երևանեան հրապարակի վրա) և ՍԱՐԱՅԵԱՆԻ
ծխախոտի խանութում (Սարաջիկի տանը):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքի առողջապահութիւնը. — Ն երբ ի ն
տեսութիւնն է. Գ. Արծրունի, Նամակ Բա-
րասխանազարի: Նամակ Կաղաքեանմանից: Նա-
մակ խմբագրի, Ներքին լուրեր: Արտաքին
տեսութիւնն, Թիւրքիա և պատերազմը, Նա-
մակ Գերմանիայից, Նամակ Թիւրքիայից: Ար-
տաքին լուրեր: — Ն առն լուրեր: — Յայտարա-
րութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրա-
կան, Կանանց սեռի կրթութեան և դաստիա-
րակութեան մասին:

ԲԱՂԱՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒ- ԹԻՒՆԸ

Նշողագացած երկիրները մեծ
մասամբ սեփականացնում են լու-
սաւորված աշխարհի քաղաքակր-
թութեան արտաքին ձևերը, քա-
ղաքակրթութեան փայլուն, ար-
տաքին հետևանքները: Նշողագա-
ցած երկիրներում նախ և առաջ
ձեռք են տալիս լուսաւորված եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆԱՆՑ ՍԵՌԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱ- ՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Հատ, որ կարդացվեցաւ Մարիամեան-Անանեան
օրիորդաց դպրոցի բացման հանդիսին, նոյեմ-
բերի 8-ն 1877.)

(Շարունակութիւն և վերջ)

Ինչպէս պատիւ ունեցայ վերել յիշելու այժմ
ժամանակները և կեանքի պայմանները փոխվել
են. տասն և իններորդ դարու հոսանքը շատ
արագընթաց է. ինչպէս գեղեցիկ ասում են աղ-
գերի կենաց երակը — պոլսը արագ է դարձում,
կարծես թէ մէկ տենդային դրութիւն է տիրում
ամեն տեղ. այժմ աղգերի բարուց և վարուց փո-
փոխութիւնները շատ հեշտ են կատարվում, աղ-
գերի յարաբերութիւնները դիւրանալով և արա-
գանալով երկաթուղիների, հեռագրների և այլն
ուրիշ միջոցների շնորհիւ, աղգերը շատ շուտ են
իրարից բան սովորում, սաստիկ չփոխվում, ուրեմն
արագ միմեանցից բան վերցնում ինչպէս լաւը,
նոյնպէս և վատը, առաւել շուտ և ամենից շատ
գուցէ թէ վատը:

Ներկայ սերունդի սրբազան պարտքն է այդ
փտանդի առաջն առնելու համար հոգալ, նորա
անմիջական շահերը պահանջում են անտարբեր
չը մնալ այս մասին:

Գոտութեամբ սրտի կարելի է ասել որ մեր
հայ հասարակութիւնը, որ դործական է, հեռա-
տես և զգուշ, քիչ շատ իր պարտքը չէ մոռա-
ցել, ձեռքից երբ շատ արեւ է և աշխատում է
ամեն կերպ դործել այդ նպատակի համար:

Արդէն տաս տասնութինգ տարի է որ մեր մէջ

կիրները քաղաքակրթութեան ա-
մենակերպ արդիւններին, նրանց
ըմբռնում են և իրադրոճում են, —
դեռ ամենահարկաւոր, անհրա-
ժեշտ բաներին ձեռք չը տուած:

Մի երկրում, մի քաղաքում,
որտեղ օրինակ չը կայ դեռ ևս
չնանք, որտեղ քաղաքի մաքրու-
թեան վրա չեն մտածում, — խօ-
սում են գաղի լուսաւորութեան
վրա, հոգում են ձիաբարչ երկա-
թուղու մասին և այլն....

Այսպէս է օրինակ և մեր Թիֆ-
լիս քաղաքը: Մենք խօսում և
մտածում ենք գաղի լուսաւորու-
թեան մասին, բայց չունենք չը-
րանք ու մեր փողոցները սաս-
տիկ անմաքուր են:

Այժմ մանաւանդ, երբ օդի մէջ
կան զանազան վարակիչ հիւսն-
դութիւններ, երբ զինուորական
հիւանդանոցների պատճառով կա-
րող են տարածվել մեզանում զա-
նազան ցաւեր, պէտք է աշխա-
տել քաղաքը աւելի էլ մաքուր
պահել, քան թէ առհասարակ:

Կանանց դաստիարակութեան գործը կանոնա-
ւորեալ կերպարանք է ստացել, սկիզբը թէ և մի
փոքր թիւի է, նպատակին անհամապատաս-
խան, ցուցամոլական աստաւորութեամբ, առանց
ներքին բուն բովանդակութեան, ինչպէս այդ
յատուկ է համարեա ամեն նոր գործի, նոր գա-
ղափարի իրագործվելու սկզբնաւորութեան, բայց
վերջերը, շնորհիւ հայի դրական և խոհեմ բնա-
ւորութեան որքան կարելի էր նպատակին յար-
մար ուղղութիւն ստանալու վրա է և յոյս կայ
որ քանի դնայ այնքան մեր օրիորդաց դպրոց-
ները իրանց նպատակներին ծառայեն: Մեր
օրիորդաց դպրոցները կարող են տարրական կամ
մի փոքր դորանից աւելի բարձր ուսում աւան-
դել, իրանց աշակերտուհիներին նախապատրաս-
տել արքունական միջակարգ ուսումնարանների
համար: Ուրեմն ուսման կողմից միայն ուղղակի
մեր ուսումնարանների տուածովը շատերը չեն
կարող բաւականանալ. օրինակի համար վար-
ժուհի, ուսուցչուհի կամ դաստիարակիչ լինելու
համար շատ անբաժնայէք բաւական չէ, բայց
մեր օրիորդաց դպրոցները այնու ամենայնիւ մեծ
գործ ունեն կատարելու. նոցա մէջ պէտք է
հիմք դրուի ուսման և գլխաւորաբար դաստիա-
րակութեան. տարրական (և նոյն իսկ միջնա-
կարգ) դպրոցների ամենից առաջին պարտաւս-
րութիւնը կանոնաւոր և հիմնաւոր դաստիարա-
կութեան հիմք գցելու մէջ է կայանում: Եթէ
օրիորդը վարժվեցաւ աշխատութեան, տոկոս-
նութեան, կանոնաւոր կենցաղավարութեան,
եթէ նա համեստ, հաստատուն բնաւորու-
թեան տէր է, եթէ ուսումնարանին յաջողեցաւ
զարթեցնել նորա մէջ բարոյական և կրօնական
զգացմունքներ, և եթէ մի և նոյն ժամանակ հա-
զարդեն նորան կարեւոր պաշար գլխաւոր երկու
ընդունելից և կարեւոր գիտութիւններից չափա-
ւոր բայց հաստատ և որչափ կարելի է և սիւս-
տէմատիկական պաշար, այն ժամանակ այդ ու-
սումնարանները իրանց պարտականութիւնները
կատարած կը լինեն, և հասարակութիւնը հան-
գիստ կարող է լինել իր աղկանց ապագայի
մասին:

Մենք լսում ենք, օրինակ, որ
Թիֆլիսում տարածված է այս բօ-
ւպէիս բնական ծաղիկ անուանված
հիւանդութիւնը, որ դիպում է ոչ
թէ միայն փոքր երեխաներին,
բայց և հասակ առած մարդիկնե-
րին, — մի՞թէ քաղաքային վարչու-
թիւնը, մի՞թէ պօլիցիան և այժմ
ուշադրութիւն չեն դարձնի մեր
քաղաքի փողոցների, հրապարակ-
ների և տների գաւթիների սաս-
տիկ անմաքրութեան վրա:

Եւրօպական քաղաքներում երբ
որ յայտնվում է, կամ քաղաքին
մօտենում է մի որ և է դիպչողա-
կան հիւանդութիւն, իսկոյն գա-
նազան միջոցներ են գործ դնում
օդը մաքրելու, ապականված տե-
ղերը խտակելու համար: Վերջին
հնարած քիմիական միջոցներից
մինը կարբօլեան թթու է, որ
ածում են մանաւանդ տների գա-
ւթիների և արտաքնոցների մէջ:
Երբ 1871 թւին խօսեալ էր մօ-
տենում Այպցիկ քաղաքին, այդ
քաղաքի մէջ հրամայված էր ամեկ

Եթէ ընդհանուր բարոյական և ուսումնական
զարգացումը կանոնաւոր է ընթացել, իւրաքան-
չիւր օրիորդ, որքան որ և չքաւոր լինէր նա,
կարող էր դարձեալ, եթէ հանգամանք ներկա-
յանար նորան, աւելի կատարելագործվել, կամ
եթէ դժբաղատութիւնը նորան ստիպէր, սեփա-
կան աշխատութեամբ ապրել պատուով և յար-
գանքով:

Շատեր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ե. Գ. ԱՐԾՐՈՒՆԻ

Այս օրերս վախճանվեցաւ Քիֆլիսում մի անձն, գեներալ Ներսիս Կերեզեան Արծրունի, որի կեանքը և հասարակական գործունէութիւնը կապած էր Կովկասեան պատմութեան հետ:

Նա ծնվեցաւ 1804 թւին Քիւրքիայի Հայաստանի վան քաղաքում և փոքր ժամանակ իր հօր և մօր հետ տեղափոխվեցաւ Ռուսաստան, որտեղ դառնալիս ընտանիքը ընդունեց ռուսաց հպատակութիւնը: Քիֆլիսի ազնւականների դպրոցում (այժմեան դիմնադըն) իր ուսումը աւարտելուց յետոյ, Ե. Գ. Արծրունի մտաւ զինուորական ծառայութիւնը, դեռ Կայսր Ալեքսանդր I-ի թագաւորութեան ժամանակ: Կայսր Նիկողայոսի ժամանակ նա մասնակցեց պարսից և թիւրքաց պատերազմներում, մնաց մի քանի ժամանակ Պարսկաստանում որպէս ռուսաց զինուորական ազնւոյ, իսկ քառասուններորդ թուականներում զնդապետի պաշտօնը ունենալով նշանակվեցաւ Կովկասեան զօրքի գեներալ-լեյտենանտ: Գործնից յետոյ նա իր հրաժարականը տուեց ծառայութենից և միայն վաթսուներորդ թուականներում նուրից հանդէս դուրս եկաւ հասարակական ապարելը, որպէս Քիֆլիս քաղաքի քաղաքապետ, երբ մեր քաղաքում մտցնվեցաւ նոր ինքնավարութիւնը:

Իր գործունէութեամբ որպէս քաղաքապետ նա անուն ստացաւ մեր ազգայնականութեան մանաւանդ ստորին, արուեստաւոր դասի մէջ, որպէս արդար մարդ և արուեստաւորների դասի, մեր համբարների իրաւունքների պաշտպան:

Նորա թաղումը, որ կատարվեցաւ այս նույն ժամեր ամի 17-ին, ապացուցեց որ Ե. Գ. Արծրունի ժողովրդականութիւն ունէր մեր քաղաքացիների և մանաւանդ մեր քաղաքի արուեստաւոր դասի մէջ:

չեն. կամ հազարաւոր տարիներով սրբազորված աւանդութիւնների և սովորութիւնների հիման վրա մեզ բոլորովին խորթ են թվում. բայց ինչ անել որ հանգամանքները ստիպում են այդ անելու («հարկ զօրէնս լուծանէ»): Մենք մեր մէջ դեռ այդչափ հեռու գնալու պէտք չունենք. մենք, կարծեմ համեմատաբար աւելի քիչով կարող էինք բաւականաւ որչափ որ մեր բարքը կամ օրէնքները ներում են. ջափազանցութիւնը չի լինի ասել, որ մեր հայոց մէջ դեռ մի ուսումնարան, աղայոց թէ օրիորդաց, բացված չի լինի, որ ցանկացողներ թիւը այսքան շատ լինէր. մէկ ժամանակ օրիորդաց ուսումնարան բաց անողը համարեալ թէ բռնի տունից աղջիկ էր դուրս հանում, տնէ տուն ման գալի ծնողներին, ազգականներին համոզում և այնպէս աշակերտուէիք ձարում. իսկ այժմ բոլորովին ուրիշ դրութիւն է: Մէկ զարմանալի և անմասն տեսողութիւն էր անցեալ օրերը այստեղ. քանի հարիւրաւոր մայրեր, քոյրեր, ազգականներ խնդրում, աղաչում, պաղատում, այն, ոտները ձեռքերը համբուրում, լաց լինում, որ իրանց աղջիկները ընդունվին ձրիաբար ուսում և կրթութիւն ստանալու. մինչև անգամ մի քանիսները զանազան խորամանկ միջոցների դիմում, որ ոչ թէ մէկը, այլ երկու երեք քոյրերը միասին ընդունվեն. ուրիշ աղջերի մէջ օրէնքներ են գնում, ստիպում են, պատժում են ծընողներին որ իրանց որդիքներին ուսումնարան ուղարկեն. իսկ մեր մէջ ծնողներն են այժմ աղաչում և մենք տեղ և միջոց չունենք նոցա ամենին օգնելու:

Ինչ է այս զարմանալի իրողութեան պատճառը: Մասամբ պէտք է այս մեր ազգի բնածին ուսումնասիրական և յառաջադիմութեան ձգտող բնակչութեամբ բացատրել. բայց այդ բնազդում կամ ինստիկտը ունի դարձեալ իր բնական պատճառները: Մեր ժողովուրդը արդէն տեսնում է, և նորա արժանաւորութիւնն է, որ բաւական չուտ է տեսնում, որ ինչպէս տղան, նոյնպէս և աղջիկը, թէ որ կամենում է, այս ներկայ հանգամանքներում, պատճառը և

Ահազին ամբողջ հետեւում էր նրա յուշարկաւորութեան հանդիսին մինչև վերայի գերեզմանատունը:

ՆԱՄԱԿ ՔԱՐԱՍՈՒԲԱԶԱՐԻՑ

Ձեր պատուական «Մշակ» լրագրի մէջ նկարագրուած խեղճ և տառապեալ հայ գաղթականաց քաջած անթիւ նեղութիւնները կարգաւոր, սրբազան պարտք համարեցինք զմեզ՝ որ տեղւոյ հայոց ազգի նորահաս սերունդն ալ իրենց փոքրիկ օգնութիւնը նուիրէ նոյն հարստահարելոյ:

Ուստի հաւաքված տասն և մէկ (11) բուբլի երեսուն (30) կոպէկ փողը ուղարկելով առ ձեզ խնդրեմ ուր որ արժանի է յանձնէք. և յուսամ նամակիս ցուցակին մէջ նուիրատուաց անձանց անունները ձեր լրագրի թերթերուն մէջ կը զետեղէք: Այն նուիրատուների անունները: Գէորգ Խըյիչեան 50 կոպէկ, Գառնայ Զուռնիան 1 բուբլ, Աղաջան Խաղարանեան 50 կոպէկ, Գրիգոր Գովհաննիսեան 1 բուբլ, Կարապետ Սուպաչեան 50 կոպէկ, Խաչատուր Բորով 50 կ., Մկրտիչ Խարամուկայ 50 կ., Անդրէաս Թորոսեան 50 կ., Գովակիմ Պեկլիբեան 1 բուբլ, Սարգիս Պարտախանեան 1 բ., Մկրտիչ Ս. Միրզայով 50 կոպէկ, Գովհաննէս Բորով 50 կ., Սիմոն Բիւրսեան 30 կ., Պետրոս Թումանեան 50 կ., Գառնայ Լազնեան 50 կ., Գարութիւն Գուշեան 50 կ., Խաչուկ Գ. Սուպապովմադեան 50 կ., Գովհաննէս Պարտախանեան 50 կ., Ոմն 50 կ.— Ընդամենն է 11 բուբլի 30 կոպէկ:

ՆԱՄԱԿ ԳԱՂԱՅՈՒՄԱՆԻՑ

Նոյեմբերի 3-ին

Յեղեղով ի միասին ընդ մին հարիւր յիսուն և եօթն բուբլի, որը նուիրեալ են Ղազարու զաւառի Գիւլիման գիւղումն բնակվող տեղական և օտար անձինք յօդուտ ի Քիւրքաստանէ գաղթեալ հայոց, խնդրեմ հասցնել այդ գումարն ըստ պատկանելոյն:

Նա ևս խնդրեմ չը թողուլ հրատարակել նուիրատուաց ազգասունները և նոցա նուիրած գումարի քանակութիւնը, համաձայն ցուցակին, որն որ ընդ մին յղում եմ. Այն նուիրատուների անունները: Ներսէս Ասլանեան Աթաբեկեանց

10 բուբլ, Գարութիւն Տէր-Նիդազարեանց 5 բ., Գարութիւն Բէկդատեանց 3 բ., Պօղոս վարդապետ Տէր-Մարգարեանց 5 բ., Շաքար Խարալեանց 20 բ., Գևորգ Սիմէօնեանց Աշտարեկեցի 3 բ., Գալստ Ստեփանեանց 3 բ., Ահմէդ աղայ Էփենտիով 3 բ., Մահմետ աղայ վէլով 1 բ., Գալովր Ռօստոմեանց 2 բ., Գալովր Շահնազարեանց 1 բ., Մկրտիչ Ղարախանեանց 2 բ., Աթաբեկ Մեխրէթեանց 1 բ., Գովսէփ Ասլանեանց 3 բ., Ալեքսանդր Ասլանեանց 2 բ., Գարութիւն Գրիգորեանց 3 բ., Ալեքսանդր Մեխրէթեանց 1 բ., Ստեփան Բաղալեանց 1 բ., Գովհաննէս Սափարեանց 1 բ., Միոմն 1 բ., Աբրահամ Ամիրջանեանց 3 բ., Գովսէփ Գերօրեանց 1 բ., Ալեքսանդր Գարութիւնեանց 3 բ., Ալլուան Կարեկիւշիով 2 բ., Փետտօր փետտօրով Շչեպինին 1 բ., Եփիմ Սիմոնով Պանին 1 բ., Սիմէօն վարդանով 1 բ., Գովհաննէս Կոնիկեանց 1 բ., Միրզայ Տէր-Աստուածատուրեանց 2 բ., Մարգարէ Տէր-Գովհաննէսեանց 2 բ., Աննայ Նիկիտով Տէր-Գովհաննէսեանց 1 բ., Սօսի Գալանթարեանց 2 բ., Աստուածատուր Սարգսեանց 1 բ., Սմբատ Սարաթիկեանց 3 բ., Մէրկոյ Պապիեանց 1 բ., Մարտիրոս Տէր-Գարութիւնեանց 1 բ., Միխայիլ Խաթիբեանց 1 բ., Աբգար Բափիեանց 1 բ., Մըկրտիչ Տէր-Պապարեանց 1 բ., Ալեքսանդր Գրիգորեանց 1 բ., վարդապետ Գովսէփիեանց 3 բ., Միխայիլ Չիլիւնազէ 3 բ., Արտեմ Ուլիստանով 1 բ., Նիկայայ Սամատուրով 1 բ., Մովսէս Սիմէօնեանց 3 բ., Կարապետ Պապիեանց 1 բ., Գարութիւն Աղաջանեանց 5 բ., Եփօր Մարգարեանց 1 բ., Անդայտ ոմն 1 բ., վասիլի Տէր-Պապիեանց 5 բ., Պետր քահանայ Նովոմաչիսկի 1 բ., Մակի Գարութիւնեանց 4 բ., Թէոտ 1 բ., Մկրտիչ Մատինեանց 5 բ., բժիշկ Կերամիմ Մէլիք-Բէկարեանց 10 բ., Գալովր վարդաանեանց 1 բ., Գրիգոր Մէհրաբեանց 1 բ., Գալիթ Ուլանցով 2 բ., Գովհաննէս Շահնազարեանց 2 բուբլի.— Ընդամենն 157 բուբլի:

Ղազարու հաշտարար դատաւոր Ներսէս Ասլանեան Աթաբեկեանց:

այդ ժամանակի ընթացքում պատերազմի բողոք մէկ կամ միւս կողմէն էր անցնում: Զը նայելով, որ ժամանակը և իրաւունքը սրին է տուած, բայց զրիչը չէ դադարել նրա եղբից հետեւելու և ամեն անգամ նայած՝ թէ որ կողմն է պատերազմի բախող անցնում տուել է և տալիս է իր վճիռները և դատողութիւնները առատօրէն: Ամբողջ գրքեր էր հարկաւոր գրելու, եթէ ցանկանար մէկը, գոնայ այս եօթը ամուսայ անցքերը կարծօրէն նկարագրելու: Թէպէտ և թիւքերը անսպաս ցոյց տուին պատերազմական հանձար և ոյժ, որով դարձրին իրանց վրա Ներսիսյան ուշադրութիւնը և մինչև անգամ գրաւեցին հասարակական յարգանքը, բայց բնականապէս ինչ որ լինելու էր, սկսել է իրագործվել: Թիւքերը իրանց ուժերը վերին աստիճանի լարելով, թուլանում են և այն Մուխթար փաշան, որ պարծնում էր երկու ամիս առաջ Թիֆլիս մտնելու, ռուսաց յաղթող զորքերի առջևը փախչում է յետ: Հայաստանում կորցրին թիւքերը իրանց բոլոր զինուոր տեղերը, և արդէն Արզումանի դրան առջևը կանգնած են ռուսաց զորքերը:

Թիւքերայի եւրոպական մասում ռուսները շրջապատել են բոլորովին Օսման-փաշայի զօրքը, այն զօրքը, որի անկումը միանգամայն կը զրկէ Թիւքերային իր ամենազինուոր և նշանաւոր զօրքից: Ով չը գիտէ, որ պատերազմը հրատարակելու ժամանակ, երբ ռուսաց զօրքերը աշխատում էին Դուռայի վրայ յով անցնելու, Պէշեան գեռ անպաշտպան, հասարակ գիւղաքաղաք էր, Օսման-փաշայի շնորհով միայն թիւքերը ամրոցներ կանգնեցրին, այնպէս որ դա դառաւ երկրորդ Սեփաստաօլ, և նրա ամրոցների տակը կորաւ ռուսաց զօրքերի մի նշանաւոր մաս: Հինգ ամիս է տեւում է Պէշեայի ռմբակոծելը, բայց իզուր: Շատ բնական է, որ ամբողջ Ներսիսյան նայում է Պէշեայի ընկնելու հարցի վրա, ինչպէս մէկ վճռողական անցքի վրա որ վերջապէս կը ստիպէ Թիւքերային իր յամառութիւնը միւս կողմը զգնելու և խաղաղութիւն խնդրելու: Արդէն եւրոպական շատ լրագրողներ խոսում են Պէշեայի ընկնելու վրա, իբրեւ մէկ առիթ եւրոպական միջամտութեան: Ուրեմն մեզ համար շատ ուրախ է այն լուրը, որ Նոբերում հեռագիրները հաղորդում են, Օսման-փաշան բոլորովին շրջապատված լինելով, ուղարկել է ռուսաց բանակը բանակցող անձնատուր լինելու պայմանների վրա խօսելու: Յոյս ունենք, որ Թիւքերան Հայաստանում կրած անպաշտպանութիւններից վերջը, Պէշեան ևս կորցնելով խաղաղութիւն կը խնդրէ, եթէ չէ ուղում ինքնասպանութեան գործը շալունակել:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՅ

Բերլին. 14/26 նոյեմբերի

Ընթերցողին չը պիտի զարմացնէ, որ ես գերմանական կեանքի կենտրոնի մէջ, գերմանական կայսրութեան մայրաքաղաքում նստած, այս անգամ կրկին նախապատուում եմ ոչ գերմանական ներքին գործերի մասին խօսելու, այլ մի հարեւան աղբիւր և երկրի մասին, որի մէջ ներքին հարցեր միշտ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի վրա ամենամեծ ոչ միայն տպաւորութիւն են գործել, այլ և ամեն տեղ նշանակութիւն և ազդեցութիւն են ունեցել:

Կրկին և կրկին Ֆրանսիայի գործերն են որ ամբողջ աշխարհի ուշադրութիւնն են գրաւում և մասնաւոր այժմ, որովհետեւ, ինչպէս շատ կողմերից արդէն իրաւացի կերպով ասվել է, հաղթութիւն 1789 յեղափոխութեանից յետոյ եղել է Ֆրանսիական ազգային կեանքի մէջ աւելի մի ծանր րօպէ քան թէ այժմ, Այն երեք իշխանութիւնները, որոնց յանձնված է երկրի կառավարութիւնը այնպիսի թշնամական յարաբերութիւնների մէջ են գտնվում իրար դիմաց, որ հազիւ թէ այժմեան գրութիւնը կարող կը լինի հաշտ կերպով փոխել և հանդարտութիւն կրկին մշտնել Ֆրանսիական ներքին կեանքի մէջ: Այն բո-

լոր վերջին անցքերը, այն ցաւալի հակառակ կողմիւնը (conflict) որ ծագեցաւ ժողովրդի և նորան ներկայացող պատգամաւորների մի կողմից, և միւս կողմից նախագահ մարչալի և նորան պաշտպանող սենատի բազմութեան մէջ արդէն բաւական յայտնի է ամենքին և ուրեմն աւելորդ է թվում ինձ կրկնված լինելու: Բայց վերջին օրերը աւելի և աւելի խառնվեցին յարաբերութիւնները ազգային ներկայացուցիչների (représentation) զանազան իշխանութիւնների մէջ: Մարչալը, զրդված ամեն միացած յետադէմ և պահպանողական կուսակցութիւններից և կղերականներից, պատրաստ է իր գործութիւնը փորձել ընդդէմ ազգային ցանկութիւնների վարվելով և յուսաւով որ զօրքը նորան կը հետեւէ: Միւս կողմից հանրապետականները, յանցաւոր համարելով մարչալի և նորա միջնորդութեան վարմունքը ազգի ցանկութիւնների և ձգտումների դիմաց, կը ցանկանային դատի ենթարկել միջնորդութիւնը և զորանով ստիպել մարչալին հրաժարվել կամաւոր կերպով նախագահի պաշտօնից: Երկու կողմիցն էլ երկու կուսակցութիւնները զրգուման այն կէտին հասան որ վճռել են կռիւ մինչև վերջը չարտնականել— «jusqu'au bout»: ասում են երկու կուսակցութիւններն էլ:

Այսպիսի հանգամանքներին զարմանալի չէ որ կարելի է սպասել կամ յուսանաւ մի փորձ ժողովրդի կողմից, մի նոր յեղափոխութիւն, կամ ներքին պատերազմ, որովհետեւ ընդ կողմն էլ լինէր սկզբին յաջողութիւնը, հանրապետականների թէ պահպանողականների, միւս կուսակցութիւնը առաջին կարիքից յետոյ հրաժարվելու չէ իր իրաւացի կամ կեղծ իրաւունքներից:

Խեղճ Ֆրանսիան այժմ հեռու չէ այնպիսի խառն և չիտթ քաղաքական դրութիւնից, որ պատճառ եղաւ Սպանիայի և ապանիական Ամերիկայի անկման. և «République Française», պ. Գամբետտայի լրագիրը, իրաւացի է նկատում որ այժմ այս մտքով կարելի է գործածել, կարծեմ, Նապոլէօն Ի-ի խօսքը թէ, «Պիրենեան լեռներն էլ չը կան» (Il n'y a plus de Pyrénées) այսինքն ինչպէս որ այն ժամանակ քաղաքականութեան վերաբերութեամբ Սպանիան միաւորած էր Ֆրանսիայի հետ, նոյնպէս այժմ էլ Սպանիայի և Ֆրանսիայի մէջ տարբերութիւն չը կայ կղերականութեան արիւթեցումիւն և քաղաքական անբարոյականութեան և անկման վերաբերութեամբ: Ֆրանսիան հասաւ զերեթէ այն դրութեանը, որ քաղաքական միակ իրաւունք մարմնացած պիտի համարվի ոյժի մէջ, հիմնված զօրքի կամքի վրա կամ այն առաջնորդների կամայականութեանից կախված, որը յայտնի րօպէում ամենամեծ ազդեցութիւն ունեն զօրքի վրա: Ո՛ր կը մնան դարերի աշխատանքը և կռիւները, հազարաւոր մարդիկների թափված արեւնը, որ բոլորն էլ զոհվել է ազգայն սերունդների հասարակական կեանքը բարոյեցելու համար: Միթէ Ֆրանսիան, այն երկիրը, որ մշակել է «մարդու իրաւունքները» որ քաղաքականութեան մէջ կարողացաւ իրագործել քրիստոնէութեանից քարոզած հաւասարութեան բարոյական սկզբունքը, մինչև այն աստիճան ընկնելու է, որ խաղալի կարողանայ դառնալ կոպիտ ոյժի և կը կառավարվի զօրքի և նորա առաջնորդների կամքով:

Ամեն օր, ամեն րօպէ զրեթէ նոր լուրեր է բերում Ֆրանսիայից, բայց նոյնանից և ոչ միւր նախագահակն չէ տալիս թէ երբ և ինչով պէտք է վերջանայ այժմեան դրութիւնը: Թէ ելքը ճշմարիտ համապատասխան կը լինի դաւրու առաջադէմ ձգտումներին, կամ պէտք է Ֆրանսիան յետ մղվի քաղաքակիրթ երկրների շարքից և առաջադէմ դրութեանից և կը ստիպվի ընկնել այն խոր դրութեան մէջ, որ, ինչպէս երեւում է վիճակված է փորձել ամեն րօմանական երկրներին: Զինչեք Աթէնք, Սպարտա, Հռոմ, Բիւզանդիա, յետոյ Իտալիա, Սպանիա, նրանք ամենքն էլ ընկել են միանգամայն քաղաքակիրթութեան ամենաբարձր կէտին (իրանց ժամանակվայ ի հարկէ) հասած լինելուց յետոյ: Միթէ Ֆրանսիայի հերթն է եկել...

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պոլիս, 25 հոկտ. 77

Պատերազմական բեմէն այստեղ հասած լուրեր շատ գոհացուցիչ չեն: Պատերազմի շարունակութիւնն ինդրօրէնքէն շատեր կը սկսին վճատել: Գրեթէ ամեն մարդ կը փախաւքի որ

հաշտութիւն լինի և ժամ յառաջ վերջանայ այս սոսկալի արեւմտահեղութիւն:

Աւետարաններն դադրած են. դրամական մեծ նեղութիւն կայ: Յուրան սկսաւ երեւիլ. այս շաբաթ ստատիկ անձրեւ եկաւ:

Ազգային ուրախաւիթ լուր չը կայ բնաւ: Պատրիարքարան 3 հազար օսմ. ոսկի 1) պարտք ունի.

